

4451

83

2-96



83-3

96

ՖՐԱՆՑ ՀՈՓՄԱՆ

ՏՕՐԻ ԵՒ ՄԱԼԻ



Գեմաներէնից քաղմանց

ԳԵՈՐԳ ԲԵՐԽՈՒԳԵՐԵԱՆՑ

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6.

1913

2-96 № 115

uy

ՀՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՂՐԻՐ-ՏԵՐԵՐ

№ 115

03 AUG 2005

02 NOV 2009



ՖՐԱՆՑ ՀՈՔՄԱՆ

ՏՕԲԻ ԵՒ ՄԱԼԻ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԷՊ

իր պատանի բարեկամների համար.

Արդար մարդը կուրախանայ,
Թէ այսպիսի վրէժ տեսնէ նա:
ՍԱՂՄՈՍ

Գերաներէնից բարգմանեց
ԳԷՈՐԳ. ԲԱՐՍՈՒԴԱՐԵԱՆՑ



Թ Ի Փ Լ Ի Ս
Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6.
1913



ՄԱՐԿԱԿԱՆ ԵՂՐԻՐ-ՏԵՐԵՐ
ԵՂՐԻՐ-ՏԵՐԵՐ
ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՆ
ԵՂՐԻՐ-ՏԵՐԵՐ
28 ՄԱՐՏԻ 1919 Ք.

1009
5294

Մալու ասածի դէմ, բայց և նմանապէս չէր ուզում խոստովանել, որ ինքը սուտ էր: Քէպէտ Էդւարդը այժմ հեզ ու բարի էր և ամենեին նշոյլ չը կար նրա առաջւայ գոռոզ ու հրամայողական վարժունքից, բայց, մտածում էր Տօբին, ո՞վ գիտէ, արդեօք չէր կարող այդ մի դիմակ լինել, և չէր կարող նա իսկոյն դէն ձգել այդ գիմակը, երբ որ էլի նրանցից զօրեղ կը լինէր, իսկ իրանք, այսինքն Տօբին ու Մալին, կը լինէին նրանից թոյլ: Ո՛չ, Տօբին չէր ուզում ընկնել այդ վտանգի մէջ: Նա հաստատ վճռել էր մնալ կղզու վրայ, եթէ իրաւ կը գար նաւապետը, և յոյս ունէր Մալին էլ համաձայնեցնել այդ բանին: Այն ժամանակ երկուսն էլ ազատ կը լինէին, և էլ հարկաւոր չէր լինի «փոքր մասսայի» ձին դառնալ:

Այդ միջոցում անցկացան շատ օրեր, բայց նաւապետը չէր երևում, այնպէս որ այդ երեք կղզիաբնակ տղերքը փոքր առ փոքր մոռացան նրան: Խորտակած նաւը դեռ էլի պինդ նստած էր իր առաջւայ տեղը, բայց կամաց կամաց սկսեց քանդուել: Տախտակները, արեգակից չորացած, ճաքոտել ու հեռացել էին իրարից և բարձր ալիքները արդէն քշել տարել էին նրանից մի քանիսը:

— Վերջին հարւածը բոլորովին կը քանդէ,—ասաց Տօբին: —Լաւ չի՛ լինի, որ մէկ անգամ էլ գնանք և մնացած բաներն էլ բերենք: Ես կարծում եմ, որ շուտով փոթորիկ կը լինի:

Մալին և Էդւարդը իսկոյն ընդունեցին Տօբի առաջարկութիւնը և երեքը միասին նստեցին լաստի վրայ և գնացին դէպի խորտակած նաւը: Այսօր ալիքները սովորականից աւելի էին բարձրանում, և Մալին կարծում էր, որ այս վերջին գնալը կը լինէր դէպի նստած նաւը, և որ վաղը էլ նշոյլ չէր երևայ նրանից: Բայց փոթորիկը դեռ այնքան մօտ չէր, որ տղերքը շատ վախեցնային: Նրանք յաջողութեամբ հասան նաւի մօտ, վեր ելան, մէկ էլ լաւ ման եկան նրա քունջ ու պուճախը, կոտրեցին սենեակների մէջ պահարանները, որ առաջ մոռացել էին, և գտան նրանց մէջ ոչ միայն էլի մի քանի թանգազին առարկաներ, այլև մի մեծ գումար փող, որ անկասկած պատկանում էր Էդւարդի հօրը: Այդ բոլորը տարան, դարսեցին լաստի վրայ, բայց էլի մի քանի բան մնաց, որ չէին ուզում կորցնել:

— Ամենից լաւն է, մինք շուտ տանենք այս բաները և մէկ անգամ էլ գանք,—ասաց Տօբին:—Էդւարդը կարող է մնալ այստեղ և այդ միջոցում ժողովել մնացած բաները: Երբոր մենք

9457
574

9- 5177-55

կապահովեցնենք այս բերը, շուտ յետ կը դառնանք և նրան էլ վեր կառնենք մնացած բաների հետ: Մանաւանդ չեմ ուզում կորցնել այն երկայն չւանը:

Մալին և Էդւարդը համաձայնեցին այդ բանին, և Տօբին առաջինի հետ հեռացաւ այնտեղից, իսկ Էդւարդը մնաց նաւի վրայ: Կէս քառորդ ժամի մէջ դուրս բերեց Էդւարդը տախտակամածի վրայ բոլոր արժէքաւոր իրեղէնները, և հիմա անհամբերութեամբ և երկիւղով սպասում էր իր բարեկամների վերադարձին, որովհետեւ հողմը աւելի սաստկացել էր, և ալիքները արդէն այնպէս բարձրանում էին, որ Էդւարդը վախենում էր, որ այդ անհաստատ լաստը չի դիմանայ նրանց կատաղի զօրութեանը: Նա արդէն ուզում էր ելնել ժայռի վրայ և գնալ դէպի կղզին: հիմա այդ հեշտ էր նրա համար, որովհետեւ սովորել էր մագցել և աւելի մեծ յաջողութիւն էր ստացել, քան թէ նաւարկութեան ժամանակ. բացի դրանից ամենամօտ ժայռի վրայ շինած էր մի չւանի սանդուխք, որ հասնում էր մինչև նաւի տախտակամածը— Յանկարծ տեսաւ ինչպէս լաստը նետի պէս դուրս թռաւ ժայռի դռնից:

— Յետ գնացէք,— աղաղակեց Էդւարդը բարձր ձայնով և միևնոյն ժամանակ նշան տւեց թաշկինակով,— յետ գնացէք, փոթորիկը սաստիկ է. չէք կարող անցնել:

Տօբին և Մալին դժւար թէ լսեցին Էդւարդի խօսքերը, այլևս չէին վախենում փոթորկից, որովհետեւ ամբանում էին չւանի վրայ: Նրանք ուզեցին, որքան կարելի է, շուտ անցկենալ տարածութիւնը, որ բաժանում էր նրանց նաւից, բայց հազիւ թէ անց էին կացել նրա կէսը, որ յանկարծ մի ահագին ալիք շառաչելով վրայ հասաւ, վեր նետեց լաստը և իսկոյն էլի ցած ձգեց իր անդունդի մէջ: Երկու ձեռով պինդ բռնած ունէին Տօբին և Մալին չւանը և բաց չը թողին. բայց այնպէս սաստիկ էր հարւածը, որ չւանը չը դիմացաւ նրան, կտրւեց, և սարսափելով տեսաւ Էդւարդը, ինչպէս կատաղի ալիքները քշեցին տարան նրա բարեկամներին դէպի բաց ծովը: Կաւ է որ չւանի միւս ծայրը պինդ կապած էր նաւի վրայ, և այդ բանը էլի մի փոքր յոյս էր տալիս լաստի վրայ գտնուող տղերանց փրկութեան համար: Ահ ու դողի մէջ կանգնած էր Էդւարդը և նայում էր անդադար վեր ու վայր նետուող լաստին և այն ժամանակ միայն էլի ազատ շունչ քաշեց, երբ տեսաւ, որ Մալին ու Տօբին պինդ բռնած ունէին չւանը, իրանց փրկութեան վերջին միջոցը, և նրա օգնութեամբ աշխատում էին մօտենալ նաւին:

Հանդարտ եղանակին հեշտ էր այդ, բայց այժմ, երբ այնպէս շփոթւում էր ծովը և սաստկանում փոթորիկը, համարեա թէ անկարելի էր: Այնպէս սաստիկ լարւեցաւ չւանը, որ Էդւարդը կարծում էր, թէ ահա կը կտրւի: Նրանց բախտից այդ բանը չը պատահեց, բայց մի վայրկեան չանցաւ, որ լաստը քանդակեցաւ, և սարսափելով տեսաւ Էդւարդը, ինչպէս Տօբին ու Մալին թաղւեցին ալիքների մէջ: Հիմա միայն նրանով կարելի է փրկել նրանց, որ Էդւարդը իրան քաշէր չւանը և Տօբին ու Մալին բաց չը թողնէին նրան: Շուտ բռնեց նա չւանը, որի միւս ծայրին կախ ընկած էին Տօբին ու Մալին և բոլոր ուժով քաշեց իր մօտ, չը նայելով որ կոշտ չւանը նորից արիւնւլայ արկեց նրա հազիւ առողջացած ձեռները: Ընդդիմութիւնից, որին պիտի յաղթէր Էդւարդը, իմացաւ, որ Տօբին ու Մալին քաջութեամբ ամբանում էին չւանի վրայ: Այդ բանը նոր ոյժ տւեց և քաջալերեց նրան: Երկու բողբոջի մէջ մօտ քաշեց նա այդ երկու տարաբախտներին մինչև նաւը և ուրախութիւնից աղաղակեց բարձրաձայն, տեսնելով որ նրանք պինդ բռնած ունէին չւանը: Էդւարդը շուտ քաշեց նրանց դէպի նաւի առաջակողմը, ուր աւելի թոյլ էր ալիքների զօրութիւնը: Այստեղ շտապով ամրացրեց նա չւանը, վայր թողեց մի ուրիշ չւան և նրա օգնութեամբ վերև քաշեց տախտակամածի վրայ մէկին-միւսի ետևից: Ամենամեծ վտանգից ազատւած կանգնած էին այնտեղ Տօբին ու Մալին և ուրախանալով փաթաթեց Էդւարդը նրանց վզին: Նա լալիս ու ծիծաղում էր ուրախութիւնից, այնինչ ալիքները աւելի կատաղած յարձակւում էին նաւի վրայ և բոլորովին սասանեցնում էին նրա փտած շինւածքը: Էլ երկար մնալու ժամանակ չէր, եթէ չէին ուզում նրանք նորից վտանգի մէջ ընկնել և կերակուր դառնալ ալիքների: Տօբին տեսաւ վտանգը և ստիպեց փախչել: Մի բողբոջում կանգնած էր նա ժայռի վրայ, օգնեց Էդւարդին ու Մալինին էլ վերև գնալ և բոլորովին յոգնած նստեց իր բարեկամների մօտ, որ մի փոքր հանգստանայ և նոր շունչ առնէ: Մանչող փոթորիկը զլորում էր նաւի վրայ ահագին ալիքներ, որոնք բոլորովին ծածկեցին տախտակամածը սպիտակ փրփուրով: Յանկարծ լսեցաւ սաստիկ ճայթիւն: Նաւը շարժւեցաւ, ցնցւեց, բարձրացաւ աեղից ու կրկին յետ ընկաւ ժայռի վրայ: Ալիքները գոռալով յարձակւեցին նրա վրայ ամեն կողմից: Յետոյ լսեցաւ երկբորդ աւելի սաստիկ ճայթիւն և դէս ու դէն քշեցան մի քանի շարթ առաջ այնպիսի գեղեցիկ նաւի կոտորած գերան-

ներն ու տախտակները: Մի նշոյլ չը մնաց նրանից ժայռի վրայ:

Անխօս և սաստիկ շարժած այդ անաւոր և վսեմ տեսարանից, վեր կացան տղերքը, որոնք լաւ ժամանակ էին աղատուելի, և ժայռի վրայով յետ դարձան դէպի կղզին: Այստեղ հասնելով ապահով վրանի տակ, գրկեց Տօբին Էդւարդին և համբուրելով նրա վիրաւորւած ձեռները, ասաց.—Ներքի ինձ, Էդւարդ, ես մինչև այժմ անիրաւ էի վարւում քեզ հետ, որովհետև կասկածում էի, թէ դու ճշմարիտ սիրում լինես ինձ ու Մալուն, բայց այժմ տեսնում եմ, որ դու անկեղծ էիր վարւում մեզ հետ: Դու մեզ մահից ազատեցիր, և ես իմ օրումը չեմ մտանայ այդ: Այժմ եղբօր պէս սիրում եմ քեզ և այսուհետև միշտ քո եղբայրը կը լինեմ: Ներքի ինձ, խնդրում եմ քեզ բոլոր սրտով, ինչ վատութիւն որ արել եմ քեզ, և այսուհետև թող միայն այն յիշեմք անցեալից, ինչոր միմեանց լաւութիւն ենք արել: Կամենում ես, Էդւարդ:

— Այո, իհարկէ կամենում եմ,—պատասխանեց Էդւարդը, սեղմելով նրան իր սրտին:—Ես լաւ գիտեմ, թէ որքան մեղաւոր եմ քո և Մալու առաջ, և որ դուք շատ բան ունէք ինձ ներելու, և որովհետև ես այդ գիտեմ, այդ պատճառով վաղուց արդէն մոռացել եմ, ինչ որ դու ինձ վշտացրել ես:

Բարեկամաբար խօսակցելով և իրար գրկած նստած էին Մալին, Տօբին և Էդւարդը, այն ինչ դուրսը կատաղում էր մքրթկը: Ինչ փոյթ էր նրանց մրրիկը, երբ որ երկնային խաղաղութիւնը թաղաւորում էր նրանց սրտերի մէջ, որովհետև նրանք սիրում էին միմեանց: Երանի նրան, ում սիրաւ լի է սիրով: Այդպիսի մարդու սիրաւ լի է բախտաւորութեամբ, և արդէն այստեղ, երկրի վրայ ծաղկում է նրա համար երկինքը:

Տ Ա Մ Ն Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Չ Դ Է Պ Ի Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Դարձեալ անցկացան օրեր ու շաբաթներ և ամեն մի անցկացած օրով աւելի ու աւելի անհետանում էր մեր բարեկամների յոյսը իրանց մենակութիւնից ազատուելու մասին: Շատ անգամ նստած էին նրանք ժայռերի ամենաբարձր ծայրերին, ինչ տեղից բացւում էր նրանց աչքերի առաջ ընդարձակ տեսարան ծովի վրայ, և նայում էին, թէ երբ կը բարձրանար հորիզոնի վրայ մի անագաստ—բայց իզուր, նրանք ոչինչ չէին տեսնում, բացի ովկիանոսի ալեկոծող մակերևոյթից և կապոյտ երկնքից, որ ցողանում էր ալիքների մէջ: Սակայն Տօբին ու Մալին շատ էլ չէին տրտմում իրանց անգաղար խաբւած յոյսի վրայ և Էդւարդըն էլ փոքր առ փոքր սովորեց այս մտքի հետ, թէ գուցէ տարիներով աքսորւած մնայ այս առանձնացած կղզու վրայ, թէպէտ և, իհարկէ, նա իր բարեկամներից աւելի էր ցանկանում շուտով արժանանալ իր հօրն ու մօր տեսութեանը: Նրա առաջւայ ստրուկների սրտաշարժ և հաւատարիմ բարեկամութիւնը քաղցրացնում էր նրա համար անջատման մանր վշտերը, և բացի զրանից նա դեռ շատ մատաղահաս էր: Երիտասարդութեան համար միշտ թարմ չքով ծաղկում է յուսոյ ծաղիկը, և եթէ ուրեմն էլի շատ ուշանար փրկող նաւը, մէկ անգամ վերջապէս պիտի դար, թէև շատ օրերից ու տարիներից յետոյ:

Սակայն պատահեցին այնպիսի հանգամանքներ, որոնք այդ տղերանց համբերութիւնը անհամբերութեան փոխեցին: Եկաւ արևադարձային երկրների անձրևային ժամանակը և բերեց իր հետ ուրիշ անախորժութիւններ, որոնցից մինչև այժմ պահպանել էր նրանց գեղեցիկ եղանակը: Քանի որ արեգակը փայլում էր պարզ երկնքի վրայ, բաւական պահպանում էր եղանակի ազդեցութիւններից նրանց թեթև վրանը: Այն ժամանակ չէին նե-

դաջնում նրանց ոչ անձրևը, ոչ հողմը, ոչ էլ արևի տապը: Բայց հիմա յանկարծ ծածկւեցաւ երկինքը թանձր ու ծանր ամպերով, անձրևը թափուում էր աղբիւրների պէս, առունները հոսում էին բարձր տեղերից դէպի ծովի զառիվայր ամիը, և մի բանի բոպէի մէջ վրանի տակ փոքր լիճ դարձաւ: Այդ վատ եղանակը գիշերով պատահեցաւ ու շատ անախորժ կերպով զարթեցրեց մեր բարեկամներին խոր քնից: Շուտ վեր թռան նրանք և դուրս եկան վրանից: Կը կարծէիր, թէ բոլոր ընութիւնը վայրենի խռովութեան մէջ էր: Կայծակները փայլատակելով բորբոքում էին բոլոր երկինքը, ճայթելով գոռգոռում էր որոտմունքը ամպերի մէջ, ծովը կատաղած ալեկոծում էր և մոնչալով ու փրփրալով ջարդուում էր մօտակայ ժայռերի վրայ, տեղ-տեղ լսում էր կոտորուող ժայռերի ճայթիւնը, կարծես թէ հեռուն թնդանօթներ էին արձակում, և անձրևը հեղեղում էր այնպիսի սաստիկ ուժով, որ տղերքը մի վայրկեանի մէջ թրջւեցին մինչև կաշին. նրանք ուղեցին շտապով յետ դառնալ վրանը, բայց հազիւ թէ շուռ եկան նրա կողմը, որ մրրիկը բռնեց նրան, ուռցրեց, դուրս հանեց ցիցերը, որոնց վրայ ամրացրած էր, և թեթև ամպի նման բարձրացրեց տարաւ օդի միջով: Զարհուրած նայում էին նրա ետևից:

Տօբին առաջինը յաղթեց իր զարհուրանքը:—Դէպի անտառ, —գոռաց նա, որքան բարձր կարող էր, որ Մալին ու Էդւարդը լսեն նրա ձայնը:—Այնտեղ միայն կարող ենք պաշտպանութիւն գտնել այս զարհուրելի եղանակից: Բռնեցէք ինձ, պինդ, թէ չէ կատաղի մրրիկը վայր կը ձգէ ձեզ. հիմա յառնալ, շուռ:

Համարեա թէ ուրիշ ճար չըկար, բացի Տօբու խորհրդին հետևելուց: Շուտ վազեցին նրանք դէպի անտառը և ծածկւեցան նրա մէջ, ինչպէս երկչոտ այծեամբներ, որոնք փախչում են որսորդի հրացանից: Այժմ այստեղ ապահով էին նրանք մրրկից, բայց անձրևից չէր պահպանում նրանց և ծառերի խիտ տերևակամարը, և այս պատճառով սրտանց ուրախացան նրանք, երբոր լուսադիմին դադարեց վատ եղանակը: Հիմա դուրս եկան նրանք իրանց ապաստարանից և յետ դարձան դէպի ծովափը: Բաւական փրասէր տել նոցա երեկւան անձրևը, և մինչև անգամ կերակրեղէնի մի մասը այնպէս փշացել էր, որ էլ պէտք չէր գայ գործածելու: Թէպէտ նրանք էլի գտան վրանը, բայց այնպէս պատառտած ու կտոր կտոր արած, որ նմանապէս այսուհետեւ բանի պէտք չէր: Այժմ նրանց առաջին հոգան այն էր, որ ձեռաց մի

բնակարան շինէին իրանց համար, որ կարողանար պահպանել վատ եղանակից, և այս պատճառով շուտ շինեցին նրանք նաւի տախտակներէից մի խրճիթ ծովափի ամենաբարձր տեղերից մէկի վրայ: Թէպէտ դա պահպանում էր հողմից և անձրևից, բայց միևնոյն ժամանակ այնպէս նեղ էր, որ երեքը հազիւ հազ տեղաւորուում էին նրա մէջ: Սակայն ուրիշ ճար չը կար. նրանք համբերութեամբ պիտի տանէին ինչպէս այդ, նմանապէս էլ ուրիշ մի քանի անախորժութիւններ, որոնց բերեց իր հետ անձրևային ժամանակը: Նրանք քանի կարողանում, մխիթարում էին միմեանց, բայց ինչևիցէ վերջապէս բոլորովին ձանձրացան իրանց առանձնացած ձգնաւորական կեանքից և առաջանից մեծ եռանդով սկսեցին ցանկանալ շուտով ազատել իրանց գերութիւնից կղզու վրայ:

Անձրևային ժամանակը վերջացաւ թէ չէ, Տօբին, Մալին և Էդւարդը աւելի լուրջ պատրաստութիւններ տեսան կղզու մօտից անցնող նաւերին իրանց այնտեղ լինելը ցոյց տալու համար: Նրանք մի նոր դրօշակ ցցեցին ծառի վրայ և իրանց մէջ կարգազրեցին, որ ցերեկը միշտ նրանցից մէկը պահպան կանգնէր նրա մօտ և հեռագիտակով, որ գտել էին նաւի վրայ, նայէր հորիզոնի կողմը և իսկոյն իմաց անէր ընկերներին, եթէ մի առագաստ տեսնէր: Նրանք ճշտութեամբ կատարում էին այդ բանը և ամեն մի ժամից յետոյ մէկը փոխում էր միւսին, եթէ երեքն էլ միասին չէին ժայռի վրայ, որ շատ անգամ էր պատահում: Այսպէս նրանք իրանց կողմից ամեն բան արին, ինչոր հարկաւոր էին համարում, և հիմա մնում էր միայն մի լաւ բնակարան շինել, որի մէջ կարողանային անցկացնել ապագայ անձրևային ժամանակը և պաշտպանութիւն գտնել նրա դէմ:

Մէկ օր Տօբին ու Մալին շատ ժրջան աշխատում էին այդ բնակարանի վրայ, որ շինում էին ծառերի բնիկից: Յանկարծ վազէվազ եկաւ Էդւարդը և արդէն հեռից ձայն տւեց.

— Առագաստ, առագաստ:

Տօբին և Մալին իսկոյն դէն ձգեցին կացինները և շտապով վազեցին Էդւարդի հետ ժայռի գլուխը: Առաջ Մալին նայեց հեռագիտակով և ազդակեց ուրախացած: Շուտ խլից Տօբին Մալու ձեռից հեռագիտակը, նայեց այն կողմը և նոյնպէս խնդաց: Մի առագաստ, իսկապէս մի առագաստ դուրս եկաւ ծովից հորիզոնի վրայ և, ինչպէս երևում էր, գալիս էր կղզու կողմը: Մի ժամ ա՛ ու դողով սպասելուց յետոյ երևոյթը իսկութիւն գար-

ձաւ, որովհետեւ հետզհետէ աւելի ու աւելի բարձրանում էր այն սպիտակ ամպի կտորը ծովի մակերևոյթի վրայ: Կամաց կամաց երևացին միմեանց ետևից վերին, միջին և առաջին առաջատաները և վերջապէս երևեցաւ և ինքը նաւը ինչպէս մի սև գիծ ծովի հայելու վրայ:

— Հիմա շուտ դէպի դորձ—ասաց Տօբին:—Եկէք այնքան փայտ ու ցախ բերինք կիտենք մէկ տեղ և վառենք, որ բոցը մի տան չափ բարձրանայ: Բարձրացող ծուխը աւելի լաւ իմաց կանէ մեր մասին, քան թէ դրօշակը: Ծուտ, շուտ:

Այստեղ բոլորովին աւելորդ էր միմեանց սիրտ տալ ու խրախուսել: Երեքն էլ վազեցին և բերին անտառից բարակ ու թաց փայտ և հէնց բոպէի մէջ այնպիսի մեծ կրակ վառեցին, որ անպատճառ կը տեսնուէր մօտեցող նաւից, եթէ միայն մի մարդ նայում էր այն կողմը, ինչտեղ վառուած էր կրակը:

— Այժմ մենք արինք, ինչ որ կարող էինք,—ասաց Տօբին:—Սպասենք հետեանքին:

Քա երկար չը մնաց կասկածելի: Կէս ժամից յետոյ արձակեցին մօտեցող նաւի վրայ մի թնդանօթ, որի խուլ թնդիւնը կրկնեց կղզու արձագանգը: Ծուտ դրանից յետոյ փրփրաց մեծ կայմի ծայրին մի դրօշակ, և հիմա ընկան տգերբը միմեանց գիրկը և լալիս ու ծիծաղում էին ուրախութիւնից:

— Ազատուած ենք,—ինչու՞մ էր էդւարդը:—Ծուտով, շուտով էլի կը տեսնեմ իմ հայրենիքը և կը մտնեմ իմ հայրական տան մէջ:

— Բայց արդեօք հաստատ կը մնան խօսքիդ և ինձ ու Մալուն էլ չես ստրկացնի,—հարցրեց Տօբին ծանր գէւքով:—Ձեռ մոռանայ, որ դու մեկ ազատութիւն շնորհեցիր և խոստացար միշտ եղբօր պէս սիրել:

Ժպտելով մեկնեց էդւարդը նրան ու Մալուն իր երկու ձեռը և բաց ու անխարդախ հայեացքով նայում էր նրանց աչքերի մէջ:

Աստուած նայում է սրտիս մէջ և տեսնում իմ ամենածածուկ մտքերը,—ասաց նա:—Երբու՞մ եմ նրա սուրբ անունով, որ երբէք չեմ մոռանայ, թէ ինչ ազնիւ վրէժ առաք դուք ինձանից, երբ ես տկար ու ողորմելի ընկայ ձեր ձեռքը:

— Լաւ,—ասաց Տօբին և սրտանց սեղմեց էդւարդի ձեռը— ես հաւատում եմ քեզ և փոխանակ անտառները փախչելու, ինչպէս որ առաջ մտադիր էի, չեմ բաժանւի քեզանից:

Մալին ժպտաց և կարճ ասաց.—Ես ամենևին չեմ կասկածում էդւարդի անկեղծութեան վրայ: Նա այժմ բարի մարդ է:

Լուռ կանգնած էին երեք բարեկամները և նայում էին դէպի ծովը: Մենք կարող ենք տալ նրանց այդ գեղեցիկ անունը, որովհետեւ նրանք իրաւ որ ճշմարիտ բարեկամներ էին դարձել: Կարծես թէ թեաւորւած թուշում-մօտենում էր նաւը կղզուն, անաւրդէն կարելի էր տեսնել նրա տախտակամածի վրայ կանգնած մարգկանց կերպարանքները, կարելի էր տեսնել, ինչպէս փրփրում էին օդի մէջ թաշկինակներ, նշան ու ողջոյն տալով հեռւից: Մի կին կանգնած էր նաւի առաջակողմի վրայ և տարածում էր իր թևերը էդւարդի կողմը: Էլի մի քանի բոպէ, և էդւարդը ճանաչեց իր մօրը, հօրը, և չը կարողանալով տանել այդ մեծ երջանկութիւնը, համարեա թէ ուշաթափ վայր ընկաւ ծնկների վրայ:

Հիմա ալիքները ճեղքելով մօտեցաւ նաւը ժայռին, և մի քանի բոպէից յետոյ հանգստանում էր էդւարդը իր մօր գրկում, որ արտասուքներով և համբոյրներով ծածկեց իր մեռած ու կորած համարած և այժմ կենդանի և ողջ ու առողջ նորից գտած մէկ հատիկ որդուն: Պ. Վէստէրն էլ նմանապէս գրկեց էդւարդին և կրկին ու կրկին անգամ ջերմ հայրական սիրով սեղմում էր նրան իր կրծքին: Լուռ ու անխօս կանգնած էին Մալին ու Տօբին մի կողմը և բոլոր սրտով ուրախանում էին իրանց բարեկամի այդ մեծ և անպատմելի բախտաւորութեան վրայ: Էդւարդը կարծես թէ մոռացել էր նրանց:

Բայց միայն կրկին տեսութեան առաջին քաղցր և երջանկութեամբ լի վայրկեանին մոռացաւ նա նրանց: Յանկարծ վեղ կացաւ նա իր հօր գրկից և ասաց.

— Հայր, մայր, դուք կարծում էիք միայն մէկ զաւակ էք գտնել, ոչ, այժմ երեքն էք գտել: Տեսէք, անաւայտեղ կանգնած են ձեր առաջ Տօբին ու Մալին, նրանք իմ ստրուկներն էին և հիմա դարձել են իմ ընկերները: Առանց նրանց ես վաղուց պառկած կը լինէի թաց գերեզմանի մէջ: Նրանք փրկեցին իմ կեանքը, նրանք ամեն կերպ հոգացին ինձ համար, նրանք սիրում էին եղբօր պէս և մոռացան ինչոր առաջ վատութիւն և անիրաւութիւն էի արել նրանց: Նրանց վրէժը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իբրև հարազատ եղբայր ընդունել ինձ իրանց մէջ, և ես երբէք, երբէք կարող չեմ մոռանալ այդ բանը: Իմ թանգագին ծնողներ, թոյլ տւէք, որ նրանք այսուհետեւ էլ իմ եղբայրները լինեն:

Արտասուքներով լցեցին հղւարդի աչքերը, երբ նա առում էր այս բանը, և որովհետև անկեղծ էին նրա խօսքերը, այդ պատճառով մեծ տպաւորութիւն գործեցին նրա հօր ու մօր վրայ: Մեծամիտ պ. Վէստէրնը բարեկամաբար նայեց տղերանց, տեց նրանց իր աջ ձեռը և ասաց. — Դուք այսուհետև ազատ էք, և ես կը հոգամ ձեզ համար: Բայց հղւարդի մայրը գրկեց Տօբուն ու Մալուն և համբուրեց նրանց: Դա աւելի շատ բան յայտնեց, քան թէ հաղար խօսքեր, և առաջւայ ստրուկները, որոնց աչքերը փայլում էին ուրախութիւնից, ջերմութեամբ սեղմեցին իրանց բարեկամի ձեռը: Բախտը մտել էր նրանց մէջ, և երկինքը վերևից ուղարկում էր նրանց վրայ իր օրհնութիւնը: Երանի նրանց, որ կարող էին ուրախանալ և ոչինչ յանդիմանութիւն չէր դառնացնում նրանց ուրախութեան բաժակը:

Մի քանի խօսքով պատմեց պ. Վէստէրնը ազատող նաւի ուշանալու պատճառը: Միայն շատ վտանգներից յետոյ յաջողել էր նաւագետին հասնել իր նաւակով մի ապահով նաւահանգիստ: Բայց այնտեղ չը կար մի այնպիսի նաւ, որ կարողանար գործ դնել հղւարդի ազատութեան համար, և նա շատ ուրախ էր, որ վերջապէս մի նար գտաւ Կալկաթա գնալու: Այնտեղ հասնելով, պ. Վէստէրնը իսկոյն նշանակեց իր նաւերից մէկը հղւարդին որոնելու համար: Ել ինչ ասել կուզէ, որ հղւարդի հօրն ու մօրը շատ էր անհանգստացնում իրանց որդու վիճակը: Այդ պատճառով իրանք էլ նստեցան միեկնոյն նաւի վրայ, որ որքան կարելի է շտապեցնեն նրա ազատութիւնը: Նրանց աշխատանքը անպտուղ չը մնաց, և նրանց յոյսերը կատարեցան ամենաբախտաւոր կերպով: Այժմ ուրախ ու թեթև սրտով կարող էին մտածել հայրենիք վերադառնալու մասին:

Թորտակեւած նաւից ազատած բաները տեղաւորեցան նորեկ նաւի մէջ, և պ. Վէստէրնը մնացել էր զարմացած, տեսնելով, թէ որքան շատ բան ազատել էին այն երեք փոքր տղերքը նրա կորած համարած սեպհականութիւնից: Էղւարդը պատմեց իր հօրը, որ այդ բոլորը Տօբուն ու Մալուն ջանքերի արդիւնքն էր և միայն նրանցից պէտք է շնորհակալ լինել այդ բանի համար: Բայց ամենից աւելի օգուտ բերեց նրանց և զարմացրեց պ. Վէստէրնին, երբ Էղւարդը մանրամասն պատմեց նրան իր գլխին անցածը, որով նա աւելի գրաւեց իր հօր սիրտը Տօբուն ու Մալուն համար: Դեռ կղզուց չը հեռացած, արդէն ճշմարիտ և անկեղծ սիրում էր նրանց պ. Վէստէրնը և մտադիր էր ոչ միայն չը խանդա-

րել, այլև աւելի ամուր հաստատել նրանց բարեկամութիւնը Էղւարդի հետ: Ազատած փողից մի նշանաւոր գումար ընծայեց նա Մալուն ու Տօբուն այն պայմանով, որ նրանք յետոյ այդ փողով հողեր գնէին իր գեղեցիկ ամարանոցի մօտ: Դա մի այնպիսի պայման էր, որով երկուսն էլ շատ գոհ էին: Մի քանի օրից յետոյ նաւը նորից ճանապարհ ընկաւ դէպի Կալկաթա և կարճ ժամանակից յետոյ բախտաւորութեամբ և յաջողութեամբ հասաւ այնտեղ և խարխիս ձգեց նրա նաւահանգստում:


Միայն էլի մի քանի խօսք պիտի աւելացնենք մեր պատմութեան վրայ: Երբէք չը մոռացաւ Էղւարդը, թէ որքան շատ պարտական էր նա իր բարեկամներին՝ Տօբուն ու Մալուն, երբէք չը կտորեց իր խօսքը, որ տւել էր նրանց կարիքի մէջ: Իբրև եղբայր սիրում էր նա Տօբուն ու Մալուն, և սրանք էլ ցոյց էին տալիս նրան ամենահաւատարիմ բարեկամութիւն: Նրանք այժմ տղամարդիկ են դարձել և ուրախանում են իրանց բախտաւորութեամբ: Ով որ ճանաչում է նրանց, երանի է տալիս նրանց բախտաւորութեանը, բայց ոչոք չէ նայում նրանց նախանձոտ աչքերով: Ամենքն էլ խոստովանում են, որ նրանք արժանի են այդ բախտին: Սակայն որքան էլ մեծ լինի նրանց բախտաւորութիւնը, ամենից մեծն է նրանց հաւատարիմ բարեկամութիւնը միմեանց հետ, որ ծրից ու ծաղկեց դժբախտութեան մէջ և յետոյ այնպէս գեղեցիկ պահպանեց: Նրանց վրայ կատարեց Միքայիլ ասածը: «Հաւատարիմ բարեկամը պինդ պաշտպանութիւն է. ով որ նրան ունի, նա մեծ գանձ ունի: Հաւատարիմ բարեկամը կեանքի մխիթարութիւնն է: Ով որ ունի Աստուծոյ երկիւղը, նա կը ձարէ մի այլպիսի բարեկամ»:

ՖՐԱՆՑ ՀՈՓՄԱՆ

Փրանց Հոֆմանին անշուշտ պատկանում է ամենապատական տեղերից մինը այն հեղինակների շարքում, որոնք նւիրել են իրանց հանճարի գեղեցիկ արտագրութիւնները մանուկ սերնդին, ընծայելով նրան դաստիարակող և բարոյական գանազան գրւածներ: Հոֆմանի անունը հռչակած է եւրոպական մանկական մատենագրութեան մէջ: Իւրաքանչիւր հայ, որ ծանօթ է գերմաներէն լեզւին անշուշտ մեծ հաճութեամբ կարդացել է նրա բաղմաթիւ բարոյական վէպերից գոնէ մի երկուսը: Բացի յատակ բարոյականութիւնից, որ այնպէս պարզ փայլում է նրա գրւածքներում, էլի այն մեծ և հազւադիւտ արժանաւորութիւնը ունին նրա բարոյական պատմութիւնը, որ ինչպէս մանուկը, նոյնպէս և չափահասը կարդում են մեծ բաւականութեամբ:

Ընծայելով մեր ամենասիրելի հայ մանուկներին Հոֆմանի այս գեղեցիկ գրւածքի հայերէն թարգմանութիւնը, մենք համոզւած ենք, որ այդ կը տայ նրանց բարի խրատների հետ և հոգեկան մեծ բաւականութիւն:

ԹԱՐԳՄԱՆԻԶ



ԳԵՈՐԳ ԲԱՐՍՈՒԴԱՐԵԱՆՅ

Ծն. 10 նոյեմբ. 1835 Թիֆլիս, † 13 օգոստ. 1913

Գ Է Ո Ր Գ Բ Ը Ր Խ Ո Ւ Գ Ը Ր Ե Ը Ն

ՏՈՒԻ ԵՒ ՄԱԼԻ Ֆրանց Հոֆմանի այս նշանաւոր վեպի թարգմանիչը նոյնպէս նշանաւոր է և յայտնի ոչ միայն իբրև օրինակելի մանկավարժ, բանաստեղծ, այլ աւելի ևս հռչակած է գրական աշխարհում իբրև ժամանակի առաջնակարգ և բարեխիղճ թարգմանիչ:

Շիլլերի, Գէթէի, Լիսինգի և նման տիեզերահազակ հեղինակների բնագրից հայերէն թարգմանող Օրլէանի Կոյսը, Դոն-Կարլոս, Վիլհէլմ-Տէլլ, Փառուտ, Նաթան իմաստուն անմահ երկերի թարգմանիչն է Գէորգ Բարխուդարեանը: Սրա պապը զարարողցի է, գաղթելով Վրաստուն, որդին վրաց իշխանի հետ ընկնում է Պետերբուրգ, սովորում գերձակութիւն և վերագտնում Թիֆլիսում բանում առաջին եւրոպական զգեստներ կարելու արհեստանոցը: Ահա սրա որդին է Գէորգ Բարխուդարեանը, որ նախ Թիֆլիսում վրաց պոետականների (Թիֆ, I) գիմնազիայում է սովորում, ապա գնում Գորպատի համալսարանը, ուր սովորել են և Խ. Աբովեանը, Ստ. Նազարեանը, Գողոխեանը, Պատկանեանները: Աչքերի հիւանդութեան պատճառով չէ աւարտում համալսարանը, վերագտնում է հայրենիք ու ուսուցչութիւն անում ազգային, քաղաքային և գիտական ուսուցչութիւններում: Ուսուցչ. առաջին ժողովի նախաձեռնողն է Գէորգ Բարխուդարեանը, որ այդ ժամանակ Վրաստանի Թեմ. տեսուչն էր:


Ունի և ինքնուրոյն բանաստեղծութիւններ, որ երգում է ամեն տեղ, ինչպէս «Կապոյտ երկրում աստղեր են փայլում» և այլն:

Գէորգ Բարխուդարեանը ծնւել է Թիֆլիսում 1835 թ. նոյեմ. 10-ին և վախճանւել իր ծննդավայրում 1913 թ. օգոստ. 13-ին: Գերեզմանը Թիֆլիսի Վէրայի հանդատարանում:

Գէորգ Բարխուդարեանը ճանաչւած էր ամենքից իբրև օրինակելի, ճշտապահ, գթաւատ, անձնէր, անսահման պարկեշտ ու վեհանձն մարդ:

Աղբիւրին սկսել էր աշխատակցել հէնց նրա սկզբնաւորութիւնից՝ 1883 թւից և Տօրի, Մալի այս վեպը նա նւիրել էր մեզ, շնորհաւորելով 1912 թ. Աղբիւրի երեսնամեակը: Մահից մի քանի ամիս առաջ ընծայեց մեզ երգիծաբանական իր մի ոտանաւոր գրածքը, որ Տարագի 1914 թ. №№-ում է տպագրւելու:

Նոյեմբերի 29-ին 1913 թ. Գրական-Գեղագիտական Սալօնը հանգիստւոր պաշտամունք կատարեց բազմերախտ գրականագէտ Աղբիւր-Տարագի աշխատակից Գէորգ Բարխուդարեանի յիշատակին և նւիրաբերեց նրան Տարագի հերթական №-ը, լի նրա շուրջ յօդւածներով և պատկերները զանազան զիւրքերում ու ժամանակներում լուսանկարւած:



1913 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԽԵ 12

Տարեշրջանին՝ 1914 թ. նոյնպէս կը հոսի հայ մատաղ անդամտանում զուարթ ու պայծառ՝ իր կարկաչով մեր վարդ ու մանուշակ, շուշան ու յասմիկ զարնանարոյր մանուկներին ուսուցանելով իր նման յստակ ու անվհատ անդադրում սուրբ աշխատանք՝ չրկնելով ոչ մի խոչնդոտ առաջ՝ իր նպատակը իրականացնելու, այն է՝ օտեղ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւք եւ խոբել չարից, սգեղից ու վաշից: Լինել անվեհեր, հաւատալ նեւաւսուրբան յաղթանակին, որին հասնելու միակ ճշմարիտ գէնքերը գիտութիւնն ու արւեստը են:

XXXII ԱՂԲԻՒՐԻ 19 ՊՐԷՍԻԱՆՆԵՐ 14 ՏԱՐԱՉԻ XXV

Մտախի վրայ մի
ԳՈՐԳ պատից կա-
խելու համար XXV
սարայ բոլոր աւ-
խասակիցների —
— պատկերնով:

ՅԱԻԵԼԻԱԾՆԵՐ
ԳԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՅՑ—ԱԼ-
ՄԱՆԱՍ luxe հրատարակու-
թիւն:
ԺԸՏՕՆ·ՏԱՐԱՉ

ԹԱՏՐՈՆ ԵՒ
ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ
Պիէսներ. Լիբրէտո-
ներ. Բննադատութի-
ւն: Քարակտերիստիկ
կայն. Պատկերասրահ
արւեստագ. և զեղագ.

Ապառիկ և մաս-մաս վճարող, բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱՉԻ տարեկան 10 ռ. վճարող բաժանորդն ազատ մուտք ունի Գրական Գեղագիտական Սալօնը և ամեն օր աւաւտեան 11 ժ. մինչև երեկ. 8 ժ. կարող է օգուել Սալօնի ընթերցարանից:

Հասցէն՝ Редакция жур. «АГБЮР-ТАРАЗ» ТИФЛИС.
Direction «AGBUR-TARAZ». Tiflis (Caucase)

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶՈՐԵԱՆ

** ՏԱՐԱՉԸ Եւրոպական ամենափայլուն իւլլիւստրասիօն-
թեամբ: ՏԱՐԱՉԸ ների կողքին իսկ աչքի է ընկնում իր շքեղու-
ամենաճոխ գրասեղանների փառահեղ զարդն է:

32-րդ ԱՂԲԻԻՐ **1914** ՏԱՐԱԶ **25-րդ**
 S U R P S U R P

— ՊՈՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՄՆԵՐԻ —

Հայկական միակ իլիւստրացիոն
Տարազը 1914 թ. թևակոխում է
 ՅՈՒՐԵԼԵՄՆԱԿԱՆ 25-րդ
 տարին. Եւ այդ առիթով նա առաջիկայ
 1914 թ. դպրոցական աշակերտներին
ԱՂԲԻԻՐ ամսագիրը նորից
 զիջանում է տարին
 ճանապարհածախսով հանդերձ
 ըւրբըրով: Մ Է Կ

Աղբիւրի դպրոցական աշակեր-
 տներ բաժանորդների
 համար **Տարազը** հրատարակ
 ՅՈՒՐԵԼԵՄՆԱԿԱՆ ԵՆԻՈՒ Է ԱՂ-
 ԲԻԻՐԻ թղթի վրայ և բաժանորդագիրը
 Աղբիւր-Տարազի փոխանակ 10 ռ. 5 ռ.,
 սակայն առանց պրէմիաների և յաւել-
 ւածների:

Յորելիար **Տարազը** արտացոլում
 է հայկական և համաշխարհային
 Գրական-Քաղաքագիտական-Հասար-

րակական-Քննադատական - Գեղա-
 գիտական **ՏԱՐԱԶԸ** հրա-
 կանքը: տա-
 ըրակում է շքեղ ու փարթամ:
Տարազը թէ ներքին և թէ ար-
 տաքին բովանդակու-
 թեամբ հմայիչ է, ուշա- **Տարազի**
 գրաւ և բազմիմաստ:
 հրատարակ №№-ի հատավաճառը հաս-
 նում է մին- **Տարազին** աշխա-
 չն 3 ռ.: տակ-
 ցում են մեր և եւրոպական նշանաւոր
 արւեստագէտներ, գրականագէտներ,
 գիտնա- **Տարազը** համաշխարհա-
 կաններ: յին մամուլի
 մէջ ճանաչւած է իբրև հոչակատր
 պարբերական հրատարակութիւն:
Տարազը հայկական արակ ի-
 վիատրասիոնն է և հա-
 յութեան մէջ չունի մրցակից:

ԴՊՐՈՑ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

				(LUXE ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ	
Աղբիւրը տարեկան 12	№№	1 ռ.	(ԱՂԲԻԻՐ տարեկան	3 ռ.
Տարազը » » »	»	4 ռ.	(ՏԱՐԱԶ »	6 ռ.
ԱՂԲԻԻՐ ՏԱՐԱԶ	»	5 ռ.	(ԱՂԲԻԻՐ—ՏԱՐԱԶ	
ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺ.				Թաւելածներով ևւ պրէմիա- ներով »	10 ռ.
			(Արտասահման (50 ֆր.)	18 ռ.

« Ազգային գրադարան



NL0168896

